Տ. ԱՐՏԱԿ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՏԻԳՐԱՆՅԱՆԻ ՔԱՐՈԶԸ՝ ԽՈՍՎԱԾ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐՈՒՄ Ս. ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԻ ԱՌԻԹՈՎ

(4 փետրվարի, 2016 թ.)

Յանուն Հօր եւ Որդւոյ եւ Հոգւոյն Սրբոյ. ամէն:

«Աւելի մեծ սէր ոչ ոք չունի, քան այն, որ մէկն իր կեանքը տայ իր բարեկամների համար»
(**Յովհ. ԺԵ. 13**):

Սիրելի՛ հավատացյալ, ահա պատվիրան, որ տվեց մեր Տեր Հիսուս Քրիստոս: Ինչպես միշտ, մեր Տերն Իր պատվիրանը նախ Ինքն իրագործեց՝ խաչվելով մեր մեղքերի համար, զոհեց Իր կյանքը, որ մարդկությունն ապրի: Անձնազոհության օրինակ հաղիսանալով՝ մարդկությանը տվեց նահատակության գաղափարական նոր որակ: Նահատակություն, որը, այո՛, մահ է, սակայն ոչ թե մեռնելու համար, այլ՝ ապրելու նպատակով: Մահ, որ հավերժություն է բերում քեզ եւ կյանք՝ բարեկամներիդ: Ահա այս պատվիրանին հետեւելով՝ ապրեցնելով ապրեցին այսօր տոնելի սրբերն ու մեր ժողովուրդը: Նրանք հենց այդ սիրո ապրումով նահատակվեցին՝ հանուն Աստծո, Հայրենիքի եւ Ազգի. սիրով առ Աստված եւ իր նմանը՝ սեփական ժողովուրդը:

Այս սիրով տոգորված 451 թ. Հայը Ավարայրի ճակատամարտում իր գոյության եւ Արարչի հետ ապրելու իրավունքն էր ամրապնդում: Մինչ Քաղկեդոնում Քրիստոսի բնությունների շուրջ էին վիճում, իշխանության եւ գերակայության խնդիրներն էին պարզաբանում, հայ ժողովուրդը մերժում էր Հազկերտի օձային առաջարկն ու իր կյանքով փառաբանում Հիսուս Տիրոջը, իր մահվամբ հաստատում հավատքն ու սերը: Վարդանանց պատերազմը հայի՝ Արարչին վերադարձած՝ քրիստոնեացած, քրիստոնեությունը հայացրած ոգու առաջին ճիչն է անարդարության, վտանգի

ու չարիքի դեմ։ Այստեղ տեղին է հիշել Գարեգին Նժդեհի խոսքը. «Հայի քաջությունը չտկարացավ նաեւ քրիստոնեական Հայաստանում։ Սխրագործելու իր տենչանքին զուգահեռ՝ նա ընդունեց մի նոր ձեւ եւս՝ կամավոր նահատակություն, որն իր խորքի մեջ ոչ այլ ինչ է, քան գիտակցական մահվամբ քաջաբար անմահանալու ձգտում։ Ըստ էության՝ մահամերժ ոգու խիզախանք է՝ քաջություն թե նահատակություն...»։ Այո՛, մահամերժ նահատակության ոգով ներշնչված էր մի ողջ ազգ՝ կարգախոս ունենալով աստվածաշնչյան պատգամը. «...ո՞վ կարող է մեզ հեռացնել Քրիստոսի սիրուց...»։

Վարդանանք պատերազմեցին ու նահատակվեցին, ինչպես Սուրբ Եղիշեն է ասում. «...քաջերը ելան քաջերի դեմ, եւ հաղթողներ չեղան...»։

Պատմիչները վկայում են՝ բարոյական հաղթանակ տարանք, պատմաբաններից ոմանք փորձում են ապացուցել, որ պարտվել ենք։ Սակայն պատմության հոլովույթները քննելով եւ այսօր ապրելով՝ վստահ ասում ենք՝ մենք հաղթել ենք։ Այս խոսքերիս համար ո՛չ պատմիչների, ո՛չ էլ պատմաբանների վկայություններ են հարկավոր, այլ միայն պետք է շրջահայաց լինել եւ տեսնել, որ հայ ենք մնացել, քրիստոնյա հայ՝ մեր Եկեղեցիով ու հայրենիքով։ Ուրեմն՝ հաղթել ենք Վարդանանց պատեմարազմում, հաղթե՛լ ենք, որով եւ Վարդանանք հող նախապատրաստեցին Վահանյանց ապստամբության եւ Հայաստանի ինքնիշխանության համար։ Վարդանանք հետագայում ներշնչանքը դարձան մեր ժողովրդի բազում հաղթանակների, որոնց առանցքը եղան Սարդարապատի եւ Արցախի գոյամարտերը։ Վարդանանք սնեցին ու դաստիարակեցին հայի բոլոր սերունդներին։ Ավարայրով տոգորված՝ այսօր մեր սահմաններն են պահում 18-ը նոր բոլորած պատանիները, որոնց երակներում վարդանյան անձնազոհ արյունն է հոսում։ Նրանք իրենց զորությամբ, քաջությամբ եւ անձնազոհությամբ ոչ միայն դավադիր հակառորդին են զարմացնում, այլեւ ամեն օր մեզ են հիացնում։

Հազկերտների պակաս թե՛ պատմության ընթացքում եւ թե՛ այսօր հայի կյանքում չի զգացվում։ Հրովարտակներով, բռնությամբ, «մարդասիրական օգնություններով», անգամ մեր Տեր Հիսուս Քրիստոսի անունով փորձել եւ փորձում են դավանափոխ անել, ուրանալ տալ մեր՝ սուրբ առաքյալներից ու հայրապետներից ժառանգած հավատքը, հայրենիքն ու հայությունը։

Չնայած մեր մեջ եղել են ու կան վասակներ, որոնք փորձել են փրկության ուղիներ գտնել՝ հազկերտների առաջարկներին համաձայնելով,

սակայն հայն ընդհանրապես մերժել է նման առաջարկներն ու «փրկության ուղիները»:

Թշնամին դեռ գործում է՝ նոր դիմակներով եւ տարբեր գործելաոճով, սակայն էությունը չի փոխել, նույնն է: Նրան պետք է մերժել առանց վարանելու՝ ի զեն ունենալով վարդանյան անձնազոհությունն ու վահանյան հնարամտությունը:

Մի՛ եղիր Վասակի նման եւ քո անձնական շահը մի՛ խառնիր հայի ու հայրենիքի դեմ ուղղված վտանգի դիմագրավմանը, քանզի ժողովուրդն ու պատմությունն իրենց գնահատականն են տալու, իսկ Տիրոջ դատաստանը՝ փրկություն կամ պատիժ հավիտենության մեջ:

Հիշատակենք հայապաշտ Կոստան Զարյանին, ով իր չքնաղ ստեղծագործություններից մեկում ասում է. «Հայ լինելը պահանջում է մեծ ճիգ, հոգեկան կենտրոնացում, զոհաբերության ոգի, խոր հավատք եւ առաքելական մոլեռանդություն»: Սահակ-մեսրոպյան նվիրյալ ջանքերի շնորհիվ հայոց գիրը արարվեց. վերջինս բերեց մի նոր կրթական եւ թարգմանական շարժում, որ հային տվեց Աստծո խոսքը հայերենով ընթերցելու եւ Հիսուս Քրիստոսին մայրենի լեզվով երկրպագելու եւ աղոթելու հնարավորություն: Ահա այս կուռ համակարգն էր, որ նոր թագավորություն տվեց հային՝ *անթաց թագավորություն*, որն անսասանելի է:

Արքայատոհմեր եկան ու անցան՝ Երվանդունիներ, Արտաշիսյաններ, Արշակունիներ, Բագրատունիներ, սակայն Ոսկեդարի հոգեւոր-մշակութային թագավորությունը անանց մնաց:

Այդ թագավորության շնչով կազդուրված՝ հայոց վարժարանները լի էին ուսման ծարավ սաներով:

Հոգեւորականները գործում էին նվիրումով՝ Սուրբ Հոգու առաջնորդությամբ եւ ոչ թե արծաթսիրությամբ, զինվորականները՝ հայրենասիրությամբ, երկրի ղեկավարները՝ վեհանձնաբար՝ երկրի ու ժողովրդի շահերից ելնելով: Հայոց կանայք ու մայրերը զարդարված էին ոչ թե շքեղ զգեստներով ու թանկարժեք զարդերով, այլ՝ առաքինությամբ: Այս ոգով ապրող ժողովուրդը չէր կարող չպատերազմել եւ չհաղթանակել:

Սիրելի՛ ժողովուրդ, հայը միշտ արժանի գնահատական է տալիս իր անձնազոհ հերոսներին, այսօր եւս իր զավակներին մկրտում ու կոչում է Վարդանանց հերոսների անուններով, դաստիարակում նրանց առաքինությամբ:

Ահա մեր քաջարի սուրբ նահատակների բարեխոսությունն խնդրելով՝ աղաչում ենք, որ Տերն անսասան պահի մեր հայրենյաց ներքին եւ

Երկոքումք հարազատովք՝ ընտրելազոյն նահատակօք. յառաջեալ յամենեցունց՝ գլուխ եւ աւարտ մարտիրոսաց. նախաշաւիղ գոլով բարեաց՝ յառաջադէմն Գարեգին, ընկալեալ զբրաբիոնն յաղթանակ նահատակացն *(Շարական)*

Հայ լինելը պահանջում է մեծ ճիգ, հոգեկան կենտրոնացում, զոհաբերության ոգի, խոր հավատք եւ առաքելական մոլեռանդություն *(Կոստան Զարյան)*

Այո՛, մահամերժ նահատակության ոգով ներշնչված էր մի ողջ ազգ՝ կարգախոս ունենալով աստվածաշնչյան պատգամը. «...ո՞վ կարող է մեզ հեռացնել Քրիստոսի սիրուց...» *(Տ. Արտակ եպս. Տիգրանյան)*

արտաքին սահմանները, իմաստություն տա հայ ժողովրդին ու նրա առաջնորդներին՝ հայի կյանքը բարելավելու, մաքրազարդելու եւ հային արժանի կենսակերպ մատուցելու համար:

Այս առիթով շնորհավորում ենք նրանց, ովքեր կրում են մեր տոնելի սրբերի անունները: Որդիական ակնածանքով ու խոնարհությամբ, միաբանության եւ ներկա գտնվող հավատացյալ ողջ ժողովրդի անունից՝ մատչելով համբուրում եմ Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետիդ Սուրբ Աջը՝ շնորհավորելով Ձեր անվանակոչության օրը:

Սիրով, նվիրումով ու հնազադությամբ աղոթենք Հայոց Հայրապետի ու Հայրապետության համար: Թող մեր աղոթքներն ու պանծալի սրբերի բարեխոսությունը Աստծո մոտ լսելի լինեն՝ որպես ձայն բազմաց, եւ Տերը մեր Հայրապետին շնորհի Սուրբ Հոգու առաջնորդությամբ երկար տարիների բեղուն եւ արդյունավոր հովվապետություն:

Այժմ եկե՛ք բոլորս միաբերան, միասիրտ ու միակամ կանգնենք աղոթքի եւ Նորին Սրբություն Գարեգին Բ.-ի անվանակոչության առիթով կատարենք Գոհաբանական մաղթանք վասն Հայրապետի:

Թող Տիրոջ սերը, ողորմությունն ու իմաստությունը բոլորիս կյանքից անպակաս լինեն, որ հայը այժմ եւ միշտ եւ հավիտյանս կարողանա ճշմարիտ կերպով ըմբռնել փերունի պարգամները եւ չվարանի իր կյանքը բարեկամների համար զոհաբերելու. ամեն: